Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով գնանշման հարցման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 22 օգոստոսի 2018թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալայանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Վ. Սարգսյանը, Է. Մխիթարյանը և Հ. Սիրունյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նիստի օրակարգում քննարկվող հարցերն են՝

Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա>> ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ եզրակացության քննարկման արդյունքները:

2. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն 20.08.2018թ. սահմանված կարգով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից <<ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա>> ծածկագրով հրավերի 1-2 չափաբաժինների համար ներկայացված որակավորման չափանիշները հիմավորող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով ներկայացված պահանջներին: Մասնավորապես.

1. հրավերի 1-ին մասի 2.5 կետի 1-ին ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագրի պահանջի բավարարման համար ներկայացված պայմանագիրը չի կարող համարվել նմանատիպ, քանի որ ներկայացված պայմանագրի առարկան <<<<Մուսա լեռ>> հուշահամալիրի ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքներ>> են (նշված պայմանագրի շրջանակներում կատարված հիդրոտեխնիկական աշխատանքները տոկոսային հարաբերությամբ չեն բավարարում), որը չի համապատասխանում վերը նշված հրավերի պահանջներին (հաշվի չի առնվել պահանջվող լիցենզիան և հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետը):

2. Ընկերության կողմից ներկայացված Հավելված 5.2 - առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում բացակայում է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը:

3. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական միջոցներից՝ Հորատող մեքենա- ՄՏՋ 82 տրակտորի բազայի վրա տեղադրված հորատման հաստոցը չի համապատասխանում մրցույթում ներկայացված հորատման հաստոցի տեխնիկական պայմաններին (կամ համաժեք): ՄՏՋ-82 տրակտորի բազայի վրա տեղադրված շնեկային հորատման սարքավորումները նախատեսված են մինչև 4 մ խորությամբ հորատանցքեր հորատելու համար և ներկայացված УКС-22М1 հարվածաճոպանային հորատման հաստոցը ևս չի համապատասխանում մրցույթում ներկայացված հորատման հաստոցի տեխնիկական պայմաններին կամ համաժեք: Ներկայացված УКС-22М1 հարվածաճոպանային հաստոցի տեխնիկական պայմաններով հնարավոր չի իրականացնել հորատանցքերի մաքրման աշխատանքներ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության վերաբերյալ

1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.5 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 16.08.2018թ.:

- 20.08.2018թ. ստացվել է համապատասխան տեղեկատվությունը՝ համաձայն որի «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (կցվում է):

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հանձնաժողովը որոշեց՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա ծածկագրով մրցույթի 1-2 չափաբաժինների համար <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները լիարժեք գնահատելու համար, առաջարկել ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի վարչական շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Բալայան

Անդամներ _____ Ա. Սիմոնյան

_____ Վ. Սարգսյան

_____ Է. Մխիթարյան

_____ Հ. Սիրունյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան